

ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԶՈՈՀԻՓԻՇՆԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Կենդանիների մթերատվության պահպանման և բարձրացման համար շատ կարևոր է հետևել ոչ միայն կերակրման, այլև անասնագոմի գոտիագիենիկ այնպիսի պայմաններին, ինչպիսիք են՝

- անասնագոմի ջերմաստիճանը,
- օդափոխությունը,
- լուսավորությունը,
- օդի հարաբերական խոնավությունը,
- տարածքը 1 կենդանու հաշվով,
- անասնագոմի մաքրությունը:

Չի՛ կարելի մի քանի տարբեր տեսակի կենդանիների պահել միասին նույն գոմում, քանի որ տարբեր տեսակի կենդանիների համար անհրաժեշտ են տարբեր միկրոկլիմայական պայմաններ, իսկ դրանց խախտումը կրերի տարբեր հիվանդությունների:

Կովանոցում ջերմաստիճանը պետք է պահել 10°C-ից ոչ բարձր, իսկ ծնարաններում և հորթանոցներում՝ 16-18°C:

Լավ օդափոխման համար պետք է բաց պահել օդանցքերը, պատուհանները, սակայն չստեղծել միջանցիկ քամիներ:

Որքան մեծ լինի անասնագոմի լուսավորությունն, այնքան բարձր կլինի կենդանիների մթերատվությունը:

Օդի հարաբերական խոնավությունը պետք է լինի 70-80%:

Մեկ կովի հաշվով կապովի պահվածքի դեպքում պետք է հատկացվի 1.2x2.2 չափով տարածք, ծնարանում՝ 3մ/ք, հորթանոցներում՝ 0.75x1.5 չափով տարածք:

Մաքրության պահպանման համար պետք է նվազագույնն օրական 2 անգամ մաքրել անասնագոմը գոմաղբից և մեզից, կիրառել ցամաք:



 Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun Svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC

 **SDA** Strategic
Development Agency
Strategies for Development

«ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԳՑՈՒՄ ԼՄՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ»
“LIVESTOCK DEVELOPMENT IN THE SOUTH OF ARMENIA”